ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ 3/10.1

21 դեկտեմբերի 2017 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 14-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ գիտական խորհրդի՝ բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի կազմից հանել գիտխորհրդի սովորող անդամ Սոնա Ժորայի Բաղդասարյանին՝ ուսումն ավարտելու կապակցությամբ:
2. Բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի կազմում հաստատել գիտխորհրդի սովորող անդամ, քիմիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Սնակ Վիգենի Գրիգորյանին:
3. Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի կազմից հանել հանձնաժողովի նախագահ, սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Արթուր Երվանդի Մկրտիչյանին՝ սեփական դիմումի հիման վրա, գիտական խորհրդի սովորող անդամ, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Նվեր Հովհաննեսի Կիրակոսյանին՝ սեփական դիմումի հիման վրա:
4. Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի կազմում հաստատել մինչհամալսարանական կրթության վարչության պետ Վաչագան Սարգսի Գալստյանին, գիտական խորհրդի սովորող անդամ, փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Գևորգ Արշավիրի Արշակյանին:
5. Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահի պարտականությունները վերապահել ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Նաղաշ Նարինբեկի Մարտիրոսյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ